ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՈՀԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ / Մ. ՁԱՆԲԱՁՅԱՆԻ ԱՆՎ. Հ.79 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ /

ԴԱՍԱԽՈՍ՝ ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԴՊՐՈՑ
ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն---------- 3
Հասկացություն էկոլոգիայի մասին---------- 5
Էկոլոգիական դաստիարակությունը որպես մարդու համակողմանի զարգացման բաղադրամաս ---------- 8
Էկոլոգիական վարքագծի դրսևորումները դպրոցականների մոտ ---------- 14
Եզրակացություն ---------- 18
Օգտագործված գրականություն ---------- 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

« Բնությունը կատակներ չի ճանաչում, նա միշտ լուրջ է, միշտ խիստ է, միշտ ճշմարտացի է: Սխալները և մոլորությունները մարդկանցից են բխում »:

Գյոթե

Մարդը բնության զավակն է, ապրում է բնության մեջ և բնության միջոցներով: Այդ իսկ պատճառով բնության անաղարտությունը չի կարող չմտահոգել մարդկությանը: Մարդն իր ողջ կյանքի ընթացքում մշակում և զարգացնում է բնության բարիքները, օգտվելով դրանցից: Ինչպես մարդու կյանքն է հարատև, այնպես էլ բնության կյանքը: Մարդը գնալով ավելի ու ավելի է թափանցում բնության գաղտնիքների մեջ, հայտնագործում է բնության օրենքներն ու օրինաչափությունները և դրա շնորհիվ ստեղծում բազմապիսի նորանոր արժեքներ, որոնք թեթևացնում են նրա վիճակը, բարելավում կենսամակարդակը, զարգացնում մտածելակերպը: Մարդու աշխատանքայի գործունեության հետևանքով շրջակա միջավայրը կարող է խաթարվել երկու դեպքում.

ա) Երբ մարդը բնությունից կորզում և օգտագործում է ոչ այնքան, որքան կարելի է, և ոչ այնտեղ, որտեղ կարելի է:

բ) Երբ մարդը բնությանն է վերադարձնում արտադրության այնքան թափոններ և այնքան քանակով, որ բնությունը չի հասցնում «մարսել», այսինքն չի հասցնում ինքնամաքրվել:

Երկու դեպքում էլ տեղի է ունենում էկոլոգիական ճգնաժամ, ապա նաև աղետ: Շրջակա միջավայրի պահպանությանը պետք է մասնակցություն ունենան դպրոցը, ընտանիքը և ողջ հասարակությունը: Այս գործում հատկապես մեծ է դպրոցի դերը, քանի որ այստեղ է իրագործվում կազմակերպված, պլանավորված դաստիարակությունը:

Արդիականությունը: Ժամանակակից գիտության տեսակետից ներկայումս քաղաքակրթությունը ընտրության առջև է կանգնած՝ վերահաս գլոբալ աղետ՝ որպես հետևանք շրջակա միջավայրի վրա մարդու ազդեցության աճող հեղեղի ավանդական ուղու պահպանման միտումների պարագայում կամ վերակողմնորոշում դեպի զարգացման նոր ուղիներ: Մարդկության գործունեությունը հսկայական ու հաճախ անուղղելի վնաս է հասցնում շրջակա միջավայրին և կենսականորեն կարևոր ռեսուրսներին: Ներկայումս առավել արդիական է դարձել մարդու և բնության փոխազդեցության, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա մարդկային հասարակության ազդեցության էկոլոգիական խնդիրը: Սպասվող էկոլոգիական աղետի համատեքստում էկոլոգիական կրթությունը մեծ նշանակություն ունի: Բնության պահպանության գիտական հիմքը ներառում է բնական և հումանիտար գիտությունների տարբեր ոլորտներ, որոնց մեջ հիմնական տեղն է զբաղեցնում էկոլոգիան, որն իր հերթին սերտորեն կապված է այլ կենսաբանական և աշխարհագրական գիտությունների հետ: Ներկայումս բնապահպանական կրթության ոլորտում նկատվում են նոր միտումներ և խնդիրներ՝ վկայելով այն որակապես նոր մակարդակի հասնելու անհրաժեշտության մասին:

Նպատակը: Սովորողների մոտ բնության, նրա հարստության, շրջակա միջավայրի վրա նկատմամբ խնայողական և հոգատար վերաբերմունքի ձևավորում: Անձի ակտիվ կենսադիրքի մշակում, որը դրսևորվում է բնության նկատմամբ գիտակցական վերաբերմունքի մեջ, որպես ամենօրյա վարքի կանոն:

Խնդիրները :

- Հիմնախնդրին նվիրված գիտական գրականության, մեթոդա բանական մոտեցումների վերլուծության հիման վրա բացահայտել հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության օրինաչափություններն ու առանձնա հատկությունները:
- Մշակել հարցաթերթիկներ և առաջադրանքներ, ստացված տվյալների հիման վրա վերլուծել հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական գործունեության դրդապատճառների, արժեքային

կողմնորոշումների, էկոլոգիական կոմպետենտության, ձևավորվա ծության առկա վիճակը, սահմանել մակարդակները:

- Բացահայտել և փորձերով հիմնավորել բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում սովորողների էկոլոգիական արժեքային կողմնորոշումների, էկոլոգիական կոմպետենտության, աղետներին դիմակայելու կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները:
- Մշակել և գիտափորձով հիմնավորել դպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական մոդել:

Հաշվի առնելով տնտեսական զարգացման թռիչքային աճի տեմպերը, բնապահպանական կրթությունը պետք է սկսել փոքր տարիքից, քանի որ այդ պահի ձեռք բերած գիտելիքները կարող են վերածվել ապագայում ամուր համոզմունքների: Դպրոցական տարիքում երեխայի անհատականության զարգացման համար մեծ նշանակություն ունի ճանաչել բնությունը, սիրել բնությունը և իրականացնել գիտելիքների ձեռքբերման տարբեր ուղիներ և կատարել բնապահպանական դաստիարակության աշխատանքներ:

Հասկացություն էկոլոգիայի մասին

Բնությունը մեզ օժտել է բանականությամբ, որպեսզի մենք փորձենք ողջ կյանքի ընթացքում կռահել նրա հանելուկները:

Էկոլոգիան գիտություն է օրգանիզմների, նրանց համակեցությունների և շրջակա միջավայրի փոխհարաբերությունների մասին:

Էկոլոգիա բառը առաջացել է հունարեն օյկոս բառից, որը նշանակում է տուն կամ կացարան, լոգոս գիտություն բառերից, այսինքն գիտություն տան մասին: Էկոլոգիա տերմինն առաջին անգամ 1866 թ.-ին առաջարկել է գերմանացի կենսաբան Է. Հեկկելը: Նա այդ գիտությանը տվել է հետևյալ սահմանումը.

Էկոլոգիան գիտություն է օրգանիզմների և միջավայրի պայմանների միջև գոյություն ունեցող փոխազդեցությունների մասին:

Այսինքն՝ ուսումնասիրում է միջավայրի ու դրանում կատարվող փոփոխությունների ազդեցությունը կենդանի օրգանիզմների վրա:

<<Էկոլոգիան>> օգտագործվում է այլ , ավելի լայն իմաստով ևս: Դա գիտության տարբեր ճյուղերի ՝ կենսաբանություն , աշխարհագրություն, ֆիզիկա, քիմիա առարկաներից ձևավորված մի համալիր ուղղություն է, որը զբաղվում է բնական և աշխարհագրական միջավայրում մարդու հասարակական գործունեությամբ:

Այն գիտություն է նաև մարդկային հասարակության ու շրջակա բնական միջավայրի համատեղ զարգացման մասին. ուսումնասիրում է շրջակա բնական միջավայրի կայունացման ու կարգավորման կենսահարույց մեխանիզմները և կյանքի կայունությունն ապահովող գործոնները:

Մարդկանց վերաբերմունքը բնապահպանական խնդիրների լուծման համար բավարար չէ բնօգտագործման գործընթացների իրավական և տնտեսական կարգավորումներով, այլ անհրաժեշտ է մարդկային գործունեության մեջ նոր ռազմավարական արժեքա-նորմատիվային հարաբերությունների յուրացում, որը հնարավորություն է ստեղծում էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման համար:

Ներկա ժամանակում գնալով խորանում են ինչպես գլոբալ, այնպես էլ տարածաշրջանային և տեղային բնապահպանական հիմնախնդիրները, որոնք արտահայտվում են հասարակության և բնության կապերի համակարգում հակասությունների սնմամբ:

Մի շարք գիտնականներ էկոլոգիական հիմնախդիրներն են համարում՝

- Կենսոլորտի կենսաբազմազանության կրճատումը:
- Մարդկանց առողջական վիճակի վատթարացումը:
- Շրջակա միջավայրի աղտոտումը արդյունաբերական թափոններով, լրացուցիչ էներգիայով և տեղեկատվությամբ:

Էկոլոգիական դաստիարակության նպատակը կարելի է դիտարկել տարբեր վտեսանկյուններից.

1. Սոցիալական, որն արտահայտում է հասարակության պահանջը դաստիարակության նկատմամբ:
2. Անհատական-անձնային, որին հասնելու համար կարևոր նշանակություն է ձեռք բերում անձի էկոլոգիական

գիտակցության էկոկենտրոն տեսակը, էկոլոգիական մտա ծողության և էկոլոգիական պատասխանատվության ձևավորումը:

Էկոլոգիական դաստիարակությունը մանկավարժական գործընթացի մի մասն է, և նրա համալիր բնույթից էլ բխում են նրա հիմնախնդրիները.

- <<Մարդ-հասարակություն-բնություն>> ամբողջական համակարգի նկատմամբ դպրոցականների անհատական վերաբերմունքի, բնության հետ շփվելու պահանջմունքի, պատասխանատվության և էկոլոգիական աշխարհայացքի ձևավորում:
- Նրանց անձնական մասնակցությունը այդ համակարգի գործունեությանը:
- Էկոլոգիական գիտակցության և էկոլոգիական կուլտուրայի ձևավորում , բնության հետ հարաբերությունների կարգավորում:
- Բնապահպանական գործունեության դրդապատճառների և դիրքորոշումների ձևավորում՝ ուղղված բնության բազմակողմանի արժեքների գիտակցմանը:
- Բնության խնայողության անհրաժեշտության համոզմունքների ձևավորում:
- Իր և ուրիշների առողջության՝ որպես հասարակական արժեքի պահպանման նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորում:
- Էկոլոգիական իրադրության ամբողջական պատճառահետևանքային վերլուծություն :
- Էկոլոգիական գաղափարների քարոզչություն:
- Շրջակա միջավայրի գեղագիտական ընկալում և գնահատում:

  Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նրա առանձնահատկությունները.

  1. բազմատեսանկյունությունը
  2. համալիրությունը
  3. անձնային-անհատական բնույթը:

Այսպիսով էկոլոգիական դաստիարակությունն ուղղված է դպրոցա կանների մեջ բնության, շրջակա միջավայրի մասին հասկացությունների

ձևավորմանը, գիտելիքների հարստացմանը, բնության հետ ներդաշնակվելու ձգտման որակների դաստիարակման, դա էլ իր հերթին հարստացնում և ապահովում է ընդհանուր դաստիարակության ողջ գործընթացքը: Այն պետք է իրականացնել սկսած վաղ մանկական տարիքից՝ ընտանիքում, նախակրթական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում և արտադպրոցական հիմնարկներում:

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության իրականացման առաջնային գործոնը էկոլոգիական կրթությունն է, որը տրվում է ուսումնական առարկաների ՝ բնագիտության , բուսաբանության, կենսաբանության, աշխարհագրության , գրականության և այլ առարկաների միջոցով: Երկրորդ գործոնը՝ բնության, շրջակա միջավայրի ուսումնասիրման բնապահպանական հատուկ խմբերում և ընկերություններում:

Էկոլոգիական դաստիարակությունը որպես մարդու համակողմանի զարգացման բաղադրամաս

Մենք պետք է սովորենք բնության հետ ապրել ներդաշնակ. դա է ժամանակի պատվիրանը:

Էկոլոգիական դաստիարակությունն ու կրթությունն անհատի ձևավորման կարևորագույն բաղադրամասն են, որով անձը դաստիարակվում է շրջակա միջավայրի նկատմամբ ունեցած ճիշտ վերաբերմունքի պահանջներով: Այսօր արդեն արդի ժամանակների պահանջին համապատասխան ձևավորվել է էկոլոգիական մանկավարժության գիտաճյուղը, որի տարածումը պետք է դառնա ժամանակի կարևոր գրավականը:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության, արժեքային

կողմնորոշումների, էկոլոգիական կոմպետենտության, բնական աղետներին դիմակայելու կարողությունների ձևավորման արդյունավետությունը կբարձրանա, եթե.

- հաշվի առնելով ներկայիս էկոլոգիական իրավիճակը և կայուն զարգացման հայեցակարգի հիմնադրույթները՝ էկոլոգիական կրթությունը դիտարկվի որպես սովորողների ընդհանուր կրթության համակարգող տարր,
- հիմք ընդունելով հետազոտության հիմնախնդրի տեսական-մեթոդաբանական մոտեցումները՝ բացահայտվեն և հիմնավորվեն հիմնական դպրոցում սովորողների,
- առաջադրվեն և հիմնավորվեն դպրոցում բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում սովորողների էկոլոգիական արժեքային կողմնորոշումների ձևավորման մանկավարժական պայմանները՝ հիմք ընդունելով համակարգային, կայուն զարգացման, էկոմարդասիրական մոտեցումները,
- հիմնական դպրոցում մշակվի և ներդրվի սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական մոդելը:

Հետազոտության տեսական նշանակությունը պայմանավորված է մանկավարժության ոլորտում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության ժամանակակից հիմնախնդիրներին վերաբերող գիտատեսական ուսումնասիրության հարստացմամբ, օրինաչա փությունների և առանձնահատկությունների բացահայտմամբ և այդ գործընթացի կատարելագործման մանկավարժական պայմանների հիմնավորմամբ:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ մեր կողմից մշակված հիմնական դպրոցի սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության մանկավարժական մոդելը գործնական օգնություն կլինի ուսուցիչներին, ինչպես նաև կնպաստի սովորողների էկոլոգիական արժեքային կողմնորոշումների, էկոլոգիական կոմպետենտության և

էկոբարոյական վարքի ձևավորմանը, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Կրթության համակարգի արդիականացման և կայուն զարգացման համատեքստում առաջնային են դառնում հիմնական դպրոցում կրթության բովանդակության էկոլոգիականացումը, դրա կազմակերպման նոր ձևերի, միջոցների, մեթոդների առաջադրումը, որոնք որոշակիորեն կնպաստեն մարդ-բնություն-հասարակություն համակարգում կայուն հավասարակշռության պահպանմանը:
2. Էկոլոգիական կրթության և դաստիարակության օրինաչափու թյունների և առանձնահատկությունների բացահայտումը կարևոր պայման է հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի, սովորողների էկոլոգիական գործունեության դրդապատճառների, էկոլոգիական արժեքային կողմնորոշումների, աղետներին դիմակայելու կարողությունների ձևավորման արդյունավետության ապահովման համար:

<u>Էկոյոգիական արժեք, էկոյոգիական արժեքային կողմնորոշումներ, էկոյոգիական կոմպետենտություն</u> հասկացությունների նոր ձևակերպումները.

- <u>Էկոյոգիական արժեքները</u>, որպես համամարդկային արժեքային համակարգի ենթակառուցվածք, որոշում են բնության օբյեկտների, երևույթների, կենսոլորտի կայունության, բնության և հասարակության էվոլյուցիոն զարգացման նշանակությունը մարդու և ընդհանրապես հասարակության համար:
- <u>Էկոյոգիական արժեքային կողմնորոշումները</u> բնութագրում են յուրաքանչյուր անձի, սոցիալական խմբի էկոլոգիապես անվտանգ և նպատակաուղղված գործունեությունը, էկոլոգիական արժեքների և էկոբարոյական մշակույթի ձևավորվածության աստիճանը:
- <u>Էկոյոգիական կոմպետենտությունը</u> էկոլոգիական կրթության արդյունքն է և ենթադրում էսովորողների էկոլոգիական

գիտելիքների, կարողությունների, հմտությունների, արժեքային կողմնորոշումների ձևավորվածության, էկոլոգիական իրազեկության որոշակի մակարդակ և էկոլոգիապես նպատակահարմար գործունեության իրականացման կարողունակություն:

Մշտապես պետք է իմանալ, որ անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը ենթադրում է աճող սերնդի մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարակություն:

Գիտատեխնիկական առաջընթացի ներկա ժամանակաշրջանը առաջ է բերել բնության հավասարակշռության աննախադեպ խախտումներ, որը կենսոլորտի հետագա զարգացումը կախման մեջ է դնում մարդուց: Գիտնականների կարծիքով էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը այն հիմնական ոլորտներն են, որով հնարավոր է փոխել մարդու կողմից բնության նկատմամբ մոտեցումը, և որի շնորհիվ մարդը կարող է հասնել աշխարհի կայուն զարգացման: Ժամանակակից աշխարհն ապրում է իր զարգացման ծանր շրջանը: Տեխնոկրատական քաղաքակրթությունը հակասությունների մեջ է մտել բնության օրենքների հետ՝ օգտագործելով բնությունը, մարդը հակասությունների մեջ է մտել բնության օրենքների հետ: Օգտագործելով բնությունը մարդը գերագնահատել է կենսոլորտի հնարավորությունները՝ կորցրածը վերականգնելու առումով:

Շրջակա միջավայրի վիճակի այդպիսի գիտակցումը գիտելիքների տարբեր բնագավառների մասնագետներին բերեց այն եզրակացության, որ էկոլոգիական ճգնաժամը ըստ էության կրում է աշխարհայացքային, հոգևոր-բարոյական բնույթ: Իսկ դա նշանակում է, որ էկոլոգիական աղետի վիճակից դուրս գալու առաջին պայմանը սովորողների մոտ բնության անաչառության վերաբերյալ ունեցած պատկերացման և բնությունը որպես զուտ կենսապահովման միջոց դիտարկելու արժեքային կողմնորոշման վերափոխումն է:

Այսօր ընտանիքի, նախադպրոցական հաստատությունների, դպրոցի խնդիրը պետք է լինի երեխայի գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ յուրաքանչյուր մարդ բնության հետ կապված է անտեսանելի թելերով և լրիվ կախված է նրանից ոչ միայն կենսաբանական, այլև հոգևոր առումով և պետք է նրանից ընդօրինակի ներդաշնակությունը, ռիթմը, համաչափությունը,

նպատակահարմարությունը, բարությունը և այլն, որպեսզի նրանք գիտակցեն, որ իրենցից յուրաքանչյուրը բնության մի մասնիկն է, և պետք է ենթարկվի այն կարգ ու կանոնին, որը տիրում է բնության մեջ: Շրջակա միջավայրը պետք է լինի բոլոր մարդկանց հոգածության առարկան: Էկոլոգիական դաստիարակությունը չի կարող կիրառվել սոցիալ-մշակութային տեսանկյունից դուրս, քանի որ մարդու փոխգործունեությունը բնության և սոցիալական միջավայրի հետ միշտ արտացոլում է մշակույթի այն տեսակը, որի կրողը նա է: Ահա թե ինչու առանց բնօգտագործման փոփոխության չի կարելի սպասել կենսոլորտում դրական փոփոխությունների: Մշակույթը մարդու կենցաղի այն բնագավառն է, որտեղ պետք է փնտրել էկոլոգիական հիմնախնդիրների պատասխանները, քանի որ նրա հիմնավորման մեջ է ընկած բնության իմաստավորման արժեքները:

Դաստիարակության հիմնական գործառույթը կայանում է նրանում, որ աճող սերնդին փոխանցի մշակութային այն արժեքները, որոնք կուտակվել են նախորդ սերունդների կողմից և մասնակցությունը յուրաքանչյուրի մշակութային փորձի ձևավորմանը, որը էկոլոգիական իմաստով հասունացնում է անձի շրջակա բնական և սոցիալական միջավայրի հետ ունեցած փոխհարաբերություններում:

Որոշ գիտնականներ էկոլոգիական դաստիարակության հիմնական նպատակը դիտում են որպես անձի էկոլոգիական գիտակցության և մտածողության, էկոլոգիական կուլտուրայի, բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի զարգացում, ինչպես նաև բնօգտագործման գործնական փորձի ձևավորրում, ճիշտ որոշումների ընդունում, որը և կնպաստի մարդկանց առողջ կենցաղի կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը, երկրի էկոլոգիական անվտանգությանը: Հիմնական նպատակը դառնում է բնության նկատմամբ արժեքային ճիշտ կողմնորոշումների, բնապահպանական ընդունակությունների, պատաս խանատու վերաբերմունքի, բնության մեջ ճիշտ վարքագծի ունակու թյունների դրսևորումը և էկոլոգիական կուլտուրայի ձևավորումը: Այսինքն՝ էկոլոգիական դաստիարակություն ասելով հասկանում են անձի ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացների ամբողջական միասնությունը, որը նպատակաուղղված է աճող սերդի էկոլոգիական կուլտուրայի և աշխարհայացքի ձևավորմանը: Այսօր, երբ բազմաթիվ

գործոնների ազդեցության հետևանքով կորչում են բարեյական շատ արժեքներ, և հասարակությունը կարիք է զգում իսկական արժեքների, պետք է հենվել բնահարմարության, ճշմարիտ արժեքների գերակայության վրա, որով կարելի է որոշել իսկական էկոլոգիական կուլտուրա ունեցող անձին: Միայն կուլտուրայի միջոցով է հնարավոր մարդկանց գործունեության համապատասխանեցումը կենսոլորտի և կյանքի սոցիալական օրենքներին: Մարդուն շրջապատող աշխարհը բազմաձև և բազմադեմ է, դա ոչ միայն բնական կամ սոցիալական միջավայրն է, այլև արվեստի, տեղեկատվության, տեխնիկայի, բարձր տեխնոլոգիաների աշխարհն է: Այդ աշխարհներից յուրաքանչյուրի հետ ավագ դպրոցականը պետք է ստեղծի այնպիսի հարաբերություններ, որոնք նրան հնարավորություն կտան ներդաշնակ ապրելու դրանց հետ: Հաճախ այդ հարաբերությունները տարերային են, և այդ ժամանակ դեռահասը դասեր է առնում դասից՝ հաղթահարելով սեփական սխալները:

Էկոլոգիական դաստիարակությունը, որպես պարտադիր պայման, ելնում է տվյալ ազգային հանրության, տվյալ դեպքում՝ հայ ժողովրդի տարածաշրջանային-էկոլոգիական, ազգային-էթնիկական, մշակութային առանձնահատկություններից ու հոգեկերտվածքից:

Էկոլոգիական վարքագծի ձևավորումը դպրոցականների մոտ

Սովորողների, ընդհանրապես մարդու էկոլոգիական կուլտուրան նրա՝ բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի պատասխանա տվությունն է: Այն իրականություն դարձնելու համար դպրոցից, ընտանիքից, ողջ հասարակությունից պահանջվում է սովորողների հետ տանել ամենօրյա նպատակաուղղված աշխատանք: Առաջին հերթին նրանց զինել համապա տասխան գիտելիքներով: Օրինակ՝ գիտելիքներ՝ բնության և հասարակության կապի, բնության գոյության անհրաժեշտության, բնության հավասարակշռության պահպանության, էկոլոգիական արժեքների, բնությունից օգտվելու և բնությունը պահպանելու, բնական ռեսուրսների օգտագործման, բնական աղետների և այլնի մասին: Այդ աշխատանքը կարող են կատարել կենսաբանության, աշխարհագրության, ֆիզիկայի, քիմիայի ուսուցիչները, ընդհանրապես ողջ մանկավարժական կոլեկտիվը: Բնության հավասարակշռության պահպանման համար դպրոցականներն ամենուրեք պետք է պահպանեն շրջակա միջավայրի մաքրություն: Ներկայումս խիստ անհրաժեշտ է դպրոցներում ունենալ հողերի, գետերի, լճերի մաքրությունը, բուսական ու կենդանական աշխարհի պահպանման ջոկատներ... Եվ յուրաքանչյուր ուսումնական տարի դպրոցների ղեկավարությանը ներկայացնել գրավոր հաշվետվություն՝ այդ ուղղությամբ իրենց կատարած աշխատանքների մասին:

Հասարակության զարգացման առաջընթացն ավելի ու ավելի մեծ մասշտաբով է վերափոխում բնությունը, մեծացնում մարդու իշխանությունը վերջինիս նկատմամբ: Սակայն, միշտ չէ, որ նվաճելով բնությունը՝ մարդը մտահոգվում է դրա բացասական հետևանքներով, որոնք առայժմ մեծ չափերի են հասել:

Ոռոգելով անապատները, չորացնելով ճահիճները, փոխելով գետերի հունները, մարդը փոխում է նաև կյանքի կլիմայական պայմանները: Կլիմայի վրա անուղղակի ազդեցություն է թողնում նաև արտադրությունը, քանի որ բնական վառելանյութերի այրման ժամանակ տարեկան մթնոլորտ է

բարձրանում 1,5 միլիարդ տոննա ածխածին, իսկ օդում ածխածնի պարունակությունից է կախված երկրի մակերեսի ջերմությունը: Օդը, գետերը, ծովերը, հողերը գնալով ավելի մեծ չափերով են աղտոտվում: Օդի, ջրի աղտոտվելը, արդյունաբերական թափոնները, ռադիոակտիվ նյութերն ու այլ նյութեր սպառնալիք են ստեղծում մարդու գոյության համար: Մարդը պետք է ապրի բնության հետ լիակատար համաձայնության և համերաշխության մեջ, պետք է զգուշանա չափազանց և ամբողջական վերափոխումից և օգտագործումից, քանի որ դա կարող է հետագայում բացասաբար անդրադառնալ նրա էկոլոգիայի վրա: Յուրաքանչյուր մարդ պատասխանատվություն է կրում բնության պահպանության համար, քանի որ ամեն մեկը իր հնարավորությունների և ուժերի սահմաններում կարող է աջակցել բնության թեկուզ շատ աննշան մի անկյան պահպանմանը և աջակցմանը: Վերջին հաշվով մարդկանց անհատական ջանքերի գումարից է կախված բնության պահպանումը և մարդու գոյության համար բնական միջավայրի ապահովումը: Իրավացի է ասված , որ մարդու համար բնությունը և արհեստանոց է, և տաճար, իսկ մարդը նրանում և ակտիվ աշխատավոր է, և հրապուրված պաշտող: Նվաճելով բնությունը մարդը պետք է ամեն կերպ ձգտի ոչ թե ոչնչացնել բնությունը, այլ իրականացնել մարդկության երազանքը՝ լիակատար ներդաշնակության մեջ մտնել բնության հետ:
Բնութագրելով մարդու հարաբերությունը բնության նկատմամբ , մարդկանց նկատմամբ, ինքն իր նկատմամբ՝ հետազոտողները հատուկ նշել են, որ էկոլոգիական կուլտուրա, գիտակցություն , զգացմունքներ և վարքագիծ ունեցող մարդկանց մոտ կա ներդաշնակություն, իսկ նրանց վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ ներծծված է մարդասիրությամբ:

Դպրոցականների էկոլոգիական կուլտուրայի էությունը վերլուծելիս պետք է առաջնորդվել նրանով, որ այն հանդիսանում է մարդկային կուլտուրայի տեսկետներից մեկը: Ժամանակակից գիտական գրականության մեջ <<կուլտուրա>> հասկացությունը ընդունվում է որպես մարդու գոյության, կենսագործունեության միջոց: Դա նշանակում է, որ էկոլոգիական կուլտուրան մարդու գոյության միջոց է, նրա կենցաղը՝ էկոլոգիական առումով: Վ. Վ. Մատվեևի կողմից կուլտուրայի տեսակների դասակարգումը ցույց է տալիս, որ էկոլոգիական կուլտուրան ունի այն էական գծերը, որն ունի կուլտուրան ընդհանրապես՝ որպես սոցիալական երևույթ, միևնույն

ժամանակ այն համարվում է անձի ինտեգրալ բնութագիրը: Էկոլոգիական կուլտուրան, ինչպես և կուլտուրայի այլ տեսակները , իրենից ներկայացնում է նյութական և հոգևոր արժեքների հանրագումար՝ մարդու կողմից էկոլոգիական կրթության բնագավառում ստեղծված գիտելիքների, կարողությունների համակարգ:

Այլ հեղինակների կարծիքով <<էկոլոգիական>> կուլտուրան հանդես է գալիս որպես անձի ամբողջական որակներից մեկը, որը պայմանավորում է նրա կենսագործունեության ուղղվածությունը:

Էկոլոգիական կուլտուրայի բնութագրման համար՝որպես անձի ընդհանուր կուլտուրայի բաղադրամաս, կարևոր նշանակություն ունեն դպրոցականների էկոլոգիական կուլտուրայի դաստիարակման հայեցակարգերը `մշակված Մ.Դ.Լիչախով, Լ.Թ.Ասատրյանի, Փ.Ա.Սարգսյանի և այլոց կողմից, ըստ որի՝ էկոլոգիական կուլտուրան անձնավորության նորագոյացումներից է, որը ծնվում ու զարգանում է կենսագործունեության դրդապատճառային, մտածողության և հուզական ոլորտում, որը ծնվում ու զարգանում է կենսագործունեության դրդապատճառային, մտածողության և հուզական ոլորտում: Ելնելով էկոլոգիական կուլտուրա հասկացության տարբեր բնութագրումներից՝ մենք գտնում ենք, որ էկոլոգիական կուլտուրայի հիմքը համարվում է անձի էկոլոգիական ուղղվածությունը և նրա հասարակական կուլտուրայի մի մասը: Այն իրենից ներկայացնում է ամբողջական համակարգ, որը բաղկացած է հետևյալ փոխկապակցված տարրերից.

- Գիտելիքների համակարգ (բնագիտական, արժեքային, գործնական)
- Էկոլոգիական գիտակցություն
- Համոզմունքների համակարգ, որը արտացոլում է էկոլոգիական կուլտուրայի աշխարհայացքային մակարդակը
- Գործնական կարողությունների և հմտությունների համակարգ
- Էկոլոգիական վարքագծային կուլտուրա

Դա նշանակում է նրանց մոտ խնայողապաշտպանական վերաբերմունք դաստիարակել բնության նկատմամբ, գաղափար տալ նրանց բնության պահպանման անհրաժեշտության և հարստացման մասին: Հանրապետական դպրոցի առջև խնդիր է դրված հաղթահարել էկոլոգիական դաստիարակության բնագավառում տեղ գտած

թերությունները, որպեսզի աճող սերունդը սովորի բնության հետ ապրել ներդաշնակ: Առաջնահերթ հարցը այս խնդրում վերաբերում է բնության նկատմամբ գիտական գիտելիքների ձեռքբերման հարցին, բնությունը միասնության և բազմատեսակության մեջ տեսնելու հարցին:

Այս ամենին հասնելու համար սովորողների մոտ պետք է դաստիարակել հայրենասիրության, հուզականության, կարեկցանքի, գեղեցիկը զգալու, զգացմունքներ՝ նրանց հոգեկան ներաշխարհի վրա ներգրավելու միջոցով:

Եզրակացություն

Այսպիսով՝ էկոլոգիական դաստիարակությունը դպրոցի կարևոր խնդիրներից մեկն է, որը ձևավորվում է բարոյական մշակույթը և անխուսափելիորեն անդրադառնում է անհատի բնապահպանական կրթության վրա: Այն նաև խթան է հանդիսանում էկոլոգիական գիտակցության զարգացման համար: Էկոլոգիական դաստիարակությունը չափանիշ է համարվում մարդու գործնական և հոգատար վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ և այդ վերաբերմունքի համապատասխանեցումը հասարակական նորմերին:

Հայաստանում առկա էկոլոգիական խնդիրները հասնում են մեծ չափերի: Որպես օրինակ բերենք այն փաստը, որ ընդհանուր տվյալներով յուրաքանչյուր մարդու հասնում է շատ քիչ կանաչ տարածք: Այդ տարածքները ոմանք օգտագործում են սեփական նպատակների համար, հաշվի չառնելով դրա հետագա վտանգավորությունը: Ոչնչացնում են զբոսայգիները, դրանք դարձնելով սրճարաններ կամ զբոսանքի վայրեր:

Նպատակաուղղված մանկավարժական գործընթացի պայմաններում էկոլոգիապես դաստիարակված մարդու ձևավորումը ենթադրում է բնական և սոցիալական միջավայրի գործոնների մասին գիտական գիտելիքների օրգանական միասնություն: Մենք, այժմ ապրում ենք էկոլոգիական այնպիսի ժամանակաշրջանում, ուր ամեն մի պահի կարելի է սպասել էկոլոգիական աղետի: Դա գլոբալ խնդիր է և վերաբերում է բոլոր ազգերին:

Բնության պահպանության շահերը, մարդկության շահերը պահանջում են, որպեսզի մարդը գիտական մոտեցում, ամենօրյա հոգատարություն հանդես բերի բնության նկատմամբ, կշռադատի իր ամեն մի քայլը, որպեսզի ոչ այսօրվա, ոչ էլ ապագա սերունդները չզրկվեն բնության հրաշալիքներից, լիովին վայելեն նրա բարիքները: Բնությունը պահպանել, նշանակում է պահպանել մարդու գոյությունը, մեր մոլորակի վրա ստեղծել առողջության համար բարենպաստ պայմաններ, երաշխավորել մեր ու եկող սերունդների ներկան ու ապագան:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կ.Վ. Գրիգորյան, Ա. Հ. Եսայան, Հ.Գ. Ժամհարյան «Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ»
Յ. Ա . Ամիրջանյան, Մանկավարժություն, Երևան, 2005 թ.
2. Լ.Թ. Ասատրյան «Էկոլոգիական դաստիարակության հիմունքները», Երևան
3. Ա. Ս. Հովսեփյան, Ռ. Հ. Մարուխյան, «Անձի էկոլոգիական կուլտուրա», Երևան, 2005 թ.
4. Ն.Զ. Կարապետյան «Էկոլոգիական կրթություն», 2012 թ.
5. Յ.Ա. Ամիրջանյան, Մանկավարժություն, Երևան, 2005 թ.